

Մ Ա Ց Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՆԺԱՆՈՒ ԷՋԵՐ ՄԱՇՈՒՑԻ ԵՒ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ ԸՍՏ ՕՏԱՐ ԱՂՐԻՐՆԵՐԻ

(Շարտանախոթիւնն):

Դժբախտաբար, Կորինի պատմութիւնից յետոյ էլ գրերի գիւտը մնում է գաղտնիք: Մաշթոցին տանում է Կորինը ասորական քաղաքները, Ամիգ եւ այնտեղից Եգեսիա, եւ ուրիշ բան չէ ասում նրա ճանապարհորդութեան եւ կամ նրա ելքի մասին քան այն, որ Եգեսիայում երկար տքնութիւնից յետոյ նրան «պարգեւէր վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հարական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի սուրբ աշովն իւրով նշանագիրս հայերէն լեզուին»:

Եգեսիայից գնում է Մաշթոց Սամոսատ, որպէս զի Հռոփանոս ոմն հմուտ գրիչն օգնութեամբ «զամենայն ընտրութիւնս նշանագրոցն... յորինեալ եւ յանկուցեալ ի թարգմանութիւն դառնայ»:

Սամոսատից գալիս է նորէն Եգեսիա եւ տեղւոյն եպիսկոպոսի թղթով իր նորագիւտ տառերով վերագառնում Հայաստան «ի վեցերորդ ամի Ղաւմշապհոյ արքային հայոց»: Ղազար Փարպեցու գիտելով, Ղաւմշապուհ գահ էր բարձրացել պարսից Շապուհ թագաւորի օրով (383—388). Կորին, աներկբայ, այլ կարծիք ունի յիշեալ թագաւորի ժամանակի մասին, քանի որ պարզ յայտնում է. «Դպրութիւն հայոց յուրերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն»: Յազկերտն թագաւորել է 399 թուին (պարսկական տարին սկսում էր Օգոստոսի 14ին). ուրեմն, ութերորդ տարին գալիս է 406 Օգոստոսի—407 Օգոստոսի:

Սակայն եւ այս թուի արժէքը նսեմանում է եւ գրեթէ ոչնչանում, երբ Կորինը հաւատացնում է, որ Մաշթոցը «երթեալ հասանէր ի կողմանս Արամի ի քաղաքս երկուց ասորոց, որոց առաջինն Եգեսիա կոչի եւ երկրորդն Ամիգ անուն, ընդգէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բարիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս»:

Արդարեւ, արտաքին աղբիւրներից քաջայայտ է, որ Ակակը Ամիգի եպիսկոպոսն էր մտաւորապէս սկսած 419/420 թուականից:

420 թուին իրրեւ նոյն քաղաքի եպիսկոպոս ներկայ էր Եւհաննէս ժողովին¹. Թէոդոս կայսեր եւ Ղաւմ թագաւորի զինական բախումների ժամանակ Ակակը հանդիսանում է նաեւ իրրեւ քաղաքական գործիչ եւ 422ին կայսեր կողմից Ղաւմի մօտ զրկուում եւ թերեւս որոշ դեր ունում խաղաղութեան դաշինք կնքելու նոյն թուին (Սոկրատ., Եկ. Պատմ. Է, 21):

Ինչ վերաբերում է Բարիլասին, սա ոչ այլ զք է եթէ ոչ Եգեսիայի հռչակաւոր Ռաբուլ(աս) եպիսկոպոսը. եւ ուրեմն՝ Բարիլաս ուղղել է Ռարիլաս:

Սա եպիսկոպոսական աթոռի վերայ էր 412—435² Եփեսոսի ժողովի մասնակից էր. սկզբում Յովհաննէս պատրիարքի, այսինքն, նեստորականների բանակում, բայց յետոյ 431—432ին անցաւ Կիւրեղ Աղեքսանդրացու կողմը, ինչպէս պատմեցինք վերեւ:

Եթէ Մաշթոց Ամիգում ներկայացել է Ակակին եւ Եգեսիայում Ռաբուլին, այդ կարող էր լինել 420ից ոչ յառաջ եւ ոչ ուշ քան 435: Եւ եթէ իրաւ այդ ճանապարհորդութեան հետ է կապուած տառերի գիւտը, ակներեւ է, որ նա չէր կարող տեղի ունենալ Յազկերտի ութերորդ տարին — ժամանակական անհետեւութիւն:

Գարձեալ Կորինը պատմում է, որ Մաշթոցը ցանկալով նոր գիւտի բարիքը տարածել եւ Հայաստանի յունական բաժնում, ստիպուած է լինել գնալ կայսեր մօտ թոյլտուութիւն խնդրելու: Եւ զարմանալի է, որ հետը աննում տանում է «զբազմութիւն աշակերտացն ի քաղաքն Մեղիտինացուց եւ յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին. եւ գլխաւոր աշակերտացն թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին»: Իսկ ինքը Գերջանայ գնիթ եպիսկոպոսի հետ ուղեւորուում է մայրաքաղաք եւ «մտեալ առաջի պատուական աթոռոյն յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամուտ զրանն, որում Ատտիկոս կոչէին»:

Մեղիտինի եպիսկոպոս Ակակը նոյն անձն է, որի մասին խօսեցինք վերեւ, ջերմ կիւրեղական եւ անվեհեց պայքարող Եփեսոսեան վեճերի ժամանակ Անտիոքեան կուսակցութեան դէմ:

¹ Chabot, Synodicon Orient, p. 276. հմտ. Labourt, Le Christianisme dans l'empire perse, էջ 101.

² Ըստ «Ժամանակագրութեան Եգեսիոյ Ռարուլ աթոռ է նստել 723ին Սեբեւեան = 412 եւ մտեւ է 746, 8 Օգոստ. = 435, 8 Օգոստ., Chronique d'Edesse, Texte und Untersuchungen Harnack, IX, 1.

Յիշեցինք նրա թղթերը հայերին: Այն գիտնականները, որոնք ամէն կերպ աշխատում են կրեղին քարչել դէպի քաղկեդոնականութիւն, չեն վարանում Ակակին իր անյողոզդ հետեւականութեան համար անուանել միաբնակ:

Հիները ամենայն դէպքում այլ կարծիք ունէին նրա շիտակ գործունէութեան մասին. եւ նրա ուղղամտութեան փայլուն վկայականն այն է, որ թէ յոյն եւ թէ լատին եկեղեցին տօնում են նրա յիշատակը սրբերի շարքում, առաջինը՝ նրա յիշատակը սրբերի շարքում, առաջինը՝ ապրիլի 17ին *Toῦ ἐν ἀγίοις πατρὸς ἡμῶν Ἀκακίου, ἀρχιεπισκόπου Μελετιηνῆς, τοῦ θαυματουργοῦ*. Իսկ երկրորդը՝ Մարտ ամսի 31ին, նաեւ Սեպտ. 15ին:

Վ. Պոլսի պատրիարք Ատտիլը մեռած է 10 Հոկտ. 425: Ասել է թէ Մաշթոցը այն տեղ պէտք է եղած լինի 425-ից յառաջ, եւ ուրեմն առաջին այցը Ամիգ եւ Եղեւսիա ընկնում է ոչ միայն 435-ից այլ եւ 425-ից յառաջ: Ի միջոցի 420—425 տարիների Մաշթոց դառնում է Հայաստան եւ «հասեալ ի նոր քաղաքն յանգիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին հայոց, որում անուն Արտաշէս կոչէին»:

Այնուհետեւ «երկու երանելիները» Մաշթոց եւ Սահակ սկսում են պարապել թարգմանութեամբ «ըստ յառաջագոյն սովորութեան»:
«Որոց դարձեալ դէպ լինէր, պատմում է կորիւն, եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել ի կողմանս ասորոց ի քաղաքն Եղեւսացոց, զՅովի սէփի եւ երկրորդն Եղեւսի յայրարատեան գաւառէն ի կողմ գեղջէ, զի յասորական բարբառոյն սեալ ուր առաքեցան եւ կատարեալ զհրամանսն եւ առ պատուական հարսն առաքեալ գնային ի կողմանս յունաց, ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին»:

«Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել ի իջանել ի կողմանս յունաց որ եւ Դեւոնդէս առաջնոյն անուն էր եւ երկրորդն Կորիւնս եւ մատուցեալ յարէին յեղեւսի իբրեւ առ ընտանեգոյն մնդակից ի կոստանդի-նական քաղաքին եւ անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զինդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն աւրինակաւք աստուածա-տուր գրոցն եւ բազում շնորհագիր հարց յետ աւանդութեամբք եւ նիկիական եւ Եփե-սոսական կանոնաւք գային երեւելով աշխարհին հայոց եւ առաջն զնէին հարցն զբերեալ կտակարանն եկեղեցւոյ սրբոյ»:

«Յետ այնորիկ» եւ «յետ ժամանակի» անորոշ դարձումները ցոյց են տալիս, որ կամ պատմիչն անգէտ է եւ կամ չի ուզում ճշգրիտ լինել որեւէ դիտաւորութեամբ:

Ղեւոնդէոսի եւ կորիւնի երթը Վ. Պոլս կայացած պիտի լինի Եփեսոսի ժողովից յետոյ. եւ ոչ շատ ուշ, քանի որ նորա որոշումները տակաւին չէին հասել հայերին եւ Ղեւոնդն ու կորիւնն էին, որ բերեցին Տեսանք, որ Լիբերատը յիշատակում է երկու հայի առաքումն ի Վ. Պոլս Պրոկլ պատրիարքի մօտ, որոնց անուններն են Ղեւոնդէոս եւ Aberium. Վերջին անունն, անշուշտ, աղաւաղուած է. Հ. Չամչեանը ուղղում է Աբրահամ առանց որեւէ հիմքի (I, 527): Մեղ թւում է, որ Լիբերատի յայտնի դեսպանութիւնը նոյնն է, ինչ որ յիշում է կորիւնը եւ որին մասնակցել է ինքը: Ոչ միայն ժամանակը, այլ մանաւանդ Ղեւոնդի անունը երաշխաւորում են մեր վարկածի հաւանականութիւնը:

Ղեւոնդը վարդանանց պատերազմի հռչակաւոր երէցն եւ նահատակն է: Պատգամաւորութեան երկրորդ անձը, որ ըստ կորիւնի, ինքն է, հետեւաբար, նոյնանում է Լիբերատի Aberiumի հետ. ինչպէս մեկնել Կորիւն եւ Aberium անուանց յարաբերութիւնը, դժուար է գուշակել: Լիբերատի աղբիւրը Եփեսոսի ժողովի արձանագրութիւններն են եւ կիրեղի նամակները — յիշատակարաններ, որոնք գրուած են եղել յունարէն: Արդ կորիւն գրուած *καυριον նախընթաց και շաղկապի ազդեցութեամբ* *λεοντιον και καυριον* կարող էր դիպուածով կորցնել սկզբի հնչիւնը, *dittographie* թուելով գրչին: Հնագրութեան տեսակետից անհնար չէ նաեւ սկզբի *ko-* կամ *kau-* իբր *ave-* թիւր ընթերցումը: Լատինն ուրեմն, կարգացել է *ave* փոխանակ *ave < kau-*:

Թերեւս առարկուի, որ կորիւնի անելով նրա եւ Ղեւոնդի յանձնարարական էր հոգալ հոգեւոր պիտոյից խնդիրն եւ «աստուածատուր Գրոց հաստատուն օրինակ», մինչդեռ Լիբերատի յիշատակած դեսպանութիւնը դա անարանական լուրջ հարցի համար էր. կորիւն, եթէ մասնակից էր, չէր կարող անգիտանալ եւ ուրեմն աւելի ստոյգ անդեկութիւն պիտի սպասէինք նրանից: Արդեամբ իրաւունք ունինք կասկածելու կորիւնի ճշմարտախօսութիւնը, աւելի ճիշտ ծած-

կամուռութիւնը: Եղնիկ եւ Յովսէփ Եղեբսիայից անցել էին Կ. Պոլիս եւ դեռ այնտեղ էին, երբ եկան Ղեւոնդ եւ Կորիւն: Ի՞նչ պէտք կար նոր մարդ ղրկելու հեռաւոր մայրաքաղաքը սուրբ գրքի ստոյգ օրինակը բերելու համար: Բաւական էր պատուէր ուղարկել Յովսէփին եւ Եղնիկին, մանաւանդ որ ուրիշ նպատակ էլ չունէին սրանք, եթէ ոչ թարգմանական գործունէութիւն: Ահնայտնի է, որ նոր դեսպանութիւնը մի այլ առաքելութիւն պիտի ունեցած լինի: Եղնիկին յարելը եւ «միաբանութեամբ հոգեւոր պիտոյից զինդիրն վճարել»-ը գուցէ խուլ ակնարկ է եւ ընդհանուր բնորոշում այն յանձնարարութեան, որի մասին խօսել ի լուր աշխարհի անպատեհ է համարում մեր պատմիչը:

Կորիւնը հասարակ կենսագիր չէ, նա եւ կեկղեցական գործիչ է եւ իր այդպիսին պէտք է իր գրիչը համակերպէր յետ-եփեսոսեան տրամադրութեան: Հայոց կապերը Ասորիքի հետ այժմ պիտի խորշելի թուէր: Մենք տեսանք, որ Եփեսոսի ընդդիմադիր ոյժերը կենդրոնացան Անտիոքի Աթոռի շրջանում, գլուխ ունենալով պատրիարքին: Հայերը բռնել էին որոշակի Կիւրեղի կողմը: Մեկնախնի եպիսկոպոս Ակակը, որ երեւում է եւ ծագումով մօտ էր հայերին, վճռական դեր ունեցաւ եւ այս խնդրում, հաւատ ներշնչելով իր հայրենակիցներին նա նպատակեց մեծապէս Կիւրեղեան հոսանքի յաղթանակին: Հայ եկեղեցու Եփեսոսեան դաւանանքի հիմը դրուեցաւ, որ այնուհետեւ մնաց անսասան դարերի ընթացքում: Այս միայն Կիւրեղին նրա անմիջական մասնակցութեան, այլ եւ Մեկնախնի նշանաւոր եկեղեցականին եւ նրա ջանքերին է պարտական հայ եկեղեցին իր դաւանարանական խարիսխը:

Թեթեւամտութիւն կը լինէր կարծել Լիբերատի հետ միասին, թէ անգիտութիւն էր պատճառը, որ հայերը դիմեցին Պրոկլին: Տարածայնութիւնները անխուսափելի էին նաեւ Հայոց մօտ նոյն Եփեսոսեան վէճերի շուրջը: Հայաստանի հարաւային մասերը, շնորհիւ խառն ազգաբնակչութեան, ունէին նաեւ ասորի եպիսկոպոսներ, այսինքն հպատակուում էին Տիգրանի եկեղեցուն: Աղձնբերից, Մուկաց աշխարհների կողմից յիշուում են ներկայացուցիչներ Ասորի եկեղեցու սկզբնական ժողովներին. այսպէս 420 եւ 424ի գումարումներին ներկայ էին Գանիէլ եպիսկոպոս Աղձնեաց աշխարհից, Ատտիկը՝ Մուկաց եւ նոյն իսկ Հայաստանից՝ ոմն Արտաշատի եպիսկոպոս (Chabot, Synodicon): Այս աթոռ-

ները վարչապէս կապուած էին այն եկեղեցու հետ, որ յետոյ նեստորականութեան միակ ապաստարանը դարձաւ: Սրանց ազդեցութիւնը բաւական էր, որ ունէր որոշ տրամադրութիւն ընդդէմ Եփեսոսի: Թուում է, որ կար եւ ուրիշ հանգամանք՝ նոյն տրամադրութիւնը զօրացնելու համար:

Ռաբուլ եւ Ակակ, Լիբերատի ասելով, զգուշացնում էին հայ եպիսկոպոսներին, որ չընդունին Թէոդորի գրուածները: Ի՞նչ գրուածների մասին է խօսքը: Կորիւնը հաստատում է, որ իրաւ Թէոդորի «գիրք սուտապատում բերեալ երեւեցան Հայաստան աշխարհի»:

Երբ նեստորի գրքերը արգելուեցան կայսերական հրամանով imperiali lege prohibutum, ըստ նոյն Լատին պատմիչի, նրա հետեւորդները սկսեցին տարածել Թէոդորի եւ Գեորգորի գրուածները, թարգմանելով ասորի, հայ եւ պարսիկ լեզուներով: Կայսերական օրէնքը հրատարակուեցաւ ի հիւպատոսութեան Թէոդոսի XV եւ Վալենտիանի IV data III non, august. ըստ cod. Theod. եւ III calend. august. ըստ cod. Just. որ է 435, 30 Յուլիս. Պրոկլի թուղթը հայերին կրում է նոյն տարեթիւը 435 (consul. Theod. XV et Vol. IV): Ենթադրենք, որ պատրիարքական թուղթը նոյն տարուայ վերջին ամսին է ղրկուած: Օգոստոսից — Գեկտեմբեր, քանի մի ամսուայ ընթացքում անհնար էր թարգմանել Թէոդորի գրքերը, ղրկել հայերին, որպէս զի այդ հետեւանքով Ռաբուլ եւ Ակակ գրով զգուշացնէին աղանդամիտ գրքերից, եւ յետոյ հայերը ժողով գումարէին եւ դիմէին Պրոկլին եւ պատասխան ստանային:

Պարզ է, որ ինդիքը նեստորականների նորաթարգման գրքերի մասին չէ: Պէտք է ենթադրել, որ Թէոդորի գրուածները յայտնի էին հայերին մինչեւ Եփեսոսի վէճերը, եւ յայտնի էին այնպիսի պայմաններում, որ նպաստաւոր էին նրա հեղինակութեան եւ անհանգստացուցիչ Եփեսոսեան հաւատի պաշտպանների համար, որպիսիք էին Ռաբուլ եւ Ակակ:

Արդ ով, եթէ ոչ Ռաբուլ եւ Ակակ, պէտք է գիտենային, որ Թէոդորը գրագրութիւն է ունեցել հայ լուսաւորութեան հօր հուշակաւոր Մաշթոցի հետ: Թէոդորը մեռած է 428ին եւ եպիսկոպոս էր 392 թուից, նա ժամանակակից է բառի բուն մտքով Մաշթոցին: Ազգային գիր եւ գրականութիւն ստեղծելու մեծ մտքով յափըշտակուած հայ վարդապետը, որ իր երազների համար շրջել էր Մեկնախնի, Ամիգ, Եղե-

